



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-21016**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2021թ-ի նոյեմբերի 16-ի թիվ 295-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/176-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Կարեն Սարգսյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Մարինե Ֆարմանյանի, Կարեն Մեժլումյանի .

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,  
քննության առնելով փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր՝ թիվ 1038) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Գայանե Մուսաեյանը (այսուհետ նաև՝ Դիմող), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), հայտնել է, որ դիմել է փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանին (այսուհետ՝ նաև Փաստաբան) իրեն իրավաբանական օգնություն տրամադրելու համար և դրա համար վճարել է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, այնուհետև ևս 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումար: Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը բարեխիղճ փաստաբանական օգնություն չի տրամադրել իրեն, ինչի հետևանքով վերջինս հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, սակայն նույնիսկ դրանից հետո Փաստաբանը չի վերադարձրել Դիմողի կողմից վճարված գումարը և վերջինիս տրամադրած փաստաթղթերը:

Դիմողը խնդրել է Փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության :

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 29.07.2021թ. թիվ 135-Ա/ԿԳ-21016 որոշման հիման վրա Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.4 (1), 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով:

02.08.2021թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հասմիկ Բալաբեկյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

### **3. Դիմողի և Փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

20.09.2021թ. դիմողը տվել է բացատրություններ և ներկայացնելով գործի մանրամասները հայտնել է, որ փաստաբանը արդյունավետ չի իրականացրել իր շահերի պաշտպանությունը և իր կողմից փաստացի դադարեցնելով Լիդա Գագիկի Հակոբյանի լիազորությունները, փաստաբանը չի վերադարձրել իր գործին առնչվող նյութերը, ինչպես նաև չի վերադարձրել չմատուցված ծառայությունների մասով իր կողմից վճարված գումարը:

Պալատի խորհրդի նիստերին Դիմողը ներկայացել է և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

#### **3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.**

Փաստաբանը 01.10.2021 թվականին բացատրություն է ներկայացրել, որով հայտնել է, որ իր և Դիմողի միջև կնքված փաստաբանական ծառայություններ մատուցելու մասին պայմանագրի շրջանակներում ծառայությունները մատուցված են և հոնորար չմատուցված ծառայությունների դիմաց առկա չէ:

Հայտնել է նաև, որ Դիմումատուի կողմից իրեն տրվել են միայն փաստաթղթերի պատճեններ, ամբողջ փաստաթղթերի պատճենները նրան վերադարձվել են և ամեն այցի ժամանակ կատարված գործողությունների ծավալով իրեն են տրվել ուսումնասիրման համար:

Պալատի խորհրդի նիստերին Պատասխանողը միացել է հեռավար կարգով և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

#### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով որպես վկա ցուցմունք է տվել Դիմումատուի դուստրը՝ Լիանա Գրիգորյանը, և հայտնել է, որ մշտապես ներկա է եղել Դիմումատուի և փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի զրույցներին: Ի սկզբանե ծառայությունների մատուցման համար վճարվել է 500.000 ՀՀ դրամ գումար, այնուհետև՝ 150.000 ՀՀ դրամ մեկ այլ ծառայության համար, որի անդորրագիրն մինչ օրս չի տրամադրվել:

Վկան նաև հայտնել է, որ ինքն անձամբ գնացել է Լիդա Գագիկի Հակոբյանի գրասենյակ և պահանջել է վերադարձնել գոնե 150.000 ՀՀ դրամը, քանի որ այդ ծառայությունից իրենք չեն օգտվել, հայցադիմումը նույնիսկ վարույթ չի ընդունվել: Ինչին ի պատասխան Լիդա Գագիկի Հակոբյանը հայտնել է, որ անհրաժեշտ է դիմում գրել գումարի վերադարձի մասին, օրեր անց նոր գումարը կփոխանցվի, սակայն այդ տարբերակով համաձայնության չեն կարողացել գան: Դիմել են հանրային պաշտպանի գրասենյակ և փաստաբան Տիգրան Ստեփանյանը ևս կապ է հաստատել Լիդա Գագիկի Հակոբյանի հետ փաստաթղթերը և գումարը վերադարձնելու համար, սակայն վերջինս հրաժարվել է:

**4. Կարգապահական գործ Նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 04.10.2021թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

08.10.2021թ-ին կարգապահական գործը հանձնվել է խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 20.10.2021թ. ժամը 18:30-ին և 16.11.2021թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ նաև Կանոնագիրք) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

1. 02.02.2021 թվականին Դիմողը փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր է կնքել «ՀԱՄԱԼԻ Գրուպ» ՍՊ ընկերության հետ (այսուհետ՝ Ընկերություն), որով Ընկերության փաստաբան Լիդա Հակոբյանը պարտավորվել է ներկայացնել Դիմումատուի շահերը (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Ընկերության կողմից տրված դրամարկղային մուտքի օրդերի համաձայն՝

Դիմումատուն Ընկերության է փոխանցել 500.000 հազար ՀՀ դրամ:

3. Դրամարկղային մուտքի օրդերի ստացման հիմք և նպատակ դաշտում նշված է «դատական պաշտպանություն»:

4. 09.02.2021 թվականին Պայմանագրի կողմերի միջև կնքվել է Պայմանագրի անբաժանելի մաս կազմող համաձայնագիր (այսուհետ՝ 09.02.2021 թ. Համաձայնագիր):

5. 09.02.2021 թ. Համաձայնագրի 3.2 կետի համաձայն. «Սույն համաձայնագիրը կնքելու հետ կապված Պատվիրատու Գայանե Մուսաելյանը վճարում է «ՀԱՄԱԼԻ Գրուպ» ՍՊ ընկերության 150.000 ՀՀ դրամ գումար, որպես թիվ ՄԳ-1 2021 թ 02.02.2021 թվականի պայմանագրի 3-րդ կետի անբաժանելի մաս»:

6. 05.03 2021 թվականին Լիդա Գազիկի Հակոբյանի կողմից Դիմումատուի անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ արագաձուտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

7. 17.03.2021 թվականին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ վերադարձրել է Փաստաբանի կողմից 05.03.2021 թվականին ներկայացված հայցադիմումը:

8. 02.04.2021 թվականին Լիդա Հակոբյանի կողմից կրկին հայցադիմում է ներկայացրել ՀՀ արագաձուտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

9. 09.04.2021 թվականին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշմամբ դատարանը կրկին վերադարձրել է Փաստաբանի կողմից 02.04.2021 թվականին ներկայացված հայցադիմումը:

10. Դատարանի 17.03.2021թ. և 09.04.2021 թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումներով արձանագրվել է վերադարձի միևնույն հիմքերը, մասնավորապես.

«.....

**Տվյալ դեպքում հայցվորը չի կատարել պետական տուրքի վճարում, սակայն իր կողմից ներկայացված հայցադիմումում նշել է մի քանի ոչ հստակ առանձին գույքային պահանջներ, որոնցից յուրաքանչյուրի համար պետք է վճարվի առանձին պետական տուրքի գումար, ինչը չի արել:**

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ուժով հայցադիմումը ենթակա է վերադարձման, քանի որ հայցվորը որևէ ապացույց չի հիմնավորումն պետական տուրքի վճարած լինելու փաստը հավաստելու մասով չի ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումն ստորագրում է հայցվորը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցիչ ստորագրած հայցադիմումին կցվում են նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:՝

**Տվյալ դեպքում հայցվորի ներկայացուցիչը չի ներկայացրել իր անձը հաստատող փաստաթղթի պատճեն»:**

11. 09.04.2021 թ-ին Դիմողը զանգահարել է ՀՀ ոստիկանության շենգավիթ բաժին, որի կապակցությամբ 14.04.2021 թվականին ՀՀ ոստիկանության շենգավիթ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Կ. Բունաթյանը կազմել զեկուցագիր (այսուհետ՝ 14.04.2021 թ. Ձեկուցագիր):

12. 14.04.2021 թ. Ձեկուցագրում ոստիկանության կողմից արձանագրվել է, որ Դիմումատուն այլևս չի ցանկանում, որ Լիդա Գագիկի Հակոբյանը ներկայացնի իր շահերը և որ իրեն վերադարձնի գործի վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև դադարեցնի իր կողմից փաստաբանին տրամադրված լիազորագրի ժամկետը և իրեն վերադարձնի 650.000 ՀՀ դրամ գումարը:

13. Ձեկուցագրում արձանագրվել է, որ Դիմողի ահազանգի կապակցությամբ զրույց է անցկացվել փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի հետ, ով հայտնել է, որ 12.03.2021 թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատ որպեսզի դադարեցվի Գայանե Մուսաեյանի կողմից իրեն տրված լիազորագրի ժամկետը և պատասխան ստանալուց հետո գրավոր կտեղեկացնի Գայանե Մուսաեյանին:

## **6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի (արտոնագիր 1038, տրված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում հինգ անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, (չհաշված սույն կարգապահական գործը), որոնցով փաստաբանի նկատմամբ կիրառված «նկատողություն, խիստ նկատողություն» կարգապահական տույժերը մարվել են, իսկ «դեռնթուլոգիա» թեմայով 4 ա/Ժ ժամաքանակով վերապատրաստման դասընթացների մասնակցելու լրացուցիչ տույժը մարված չէ:

## **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Խորհուրդը, լսելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը թույլ է տվել **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.4 (1), 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտումներ՝ սպորև ներկայացվող պատճառաբանությամբ:**

**Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով**

**Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝** ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահողի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

**Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է վստահողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական

կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

**Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝** Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

- ա. նյութերի ուսումնասիրությունը,
- բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,
- գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,
- դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը վստահորդի շահերի իրավական պաշտպանությունն առավելագույնս պետք է իրականացնի այնպես, որպեսզի վստահորդի մոտ կասկած անգամ չհարուցվի, որ իր շահերի պաշտպանության գործում փաստաբանը դրսևորում է անբարեխիղճ վարքագիծ: Ընդ որում, բարեխիղճ իրավական օգնություն եզրույթը իր մեջ ներառում է պարտականությունների ազնվորեն, պատշաճ և ժամանակին կատարում:

Գործում առկա հանգամանքները ուսումնասիրելով, Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը հայցադիմում է ներկայացրել դատարան, այսինքն՝ Դիմողի շահերի պաշտպանությունը ի թիվս այլ իրավաբանական ծառայությունների մատուցման պարտավորությունից ստանձնել է նաև դատական ներկայացուցչություն: Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումը դատարանը երկու անգամ վերադարձրել է՝ նույն հիմքով: Այսինքն՝ միայն օրենսդրական տեսանկյունից դիտարկելով, ներկայացված հայցադիմումներում առերևույթ առկա են եղել թերություններ, որոնք հիմք են հանդիսացել դատարանի կողմից դրանք վերադարձնելու համար: Քանի որ օրենսդիրը հնարավորություն է տալիս հայցող կողմին հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկել վերադասության կարգով և եթե այն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չի բողոքարկվում, հետևաբար գործում է այն կանխավարկածը, որ դատարանի կողմից արձանագրված թերությունները հիմնավոր են:

Հետևաբար, Խորհուրդը հանգում է այն հետևության, որ Փաստաբանի կողմից չի իրականացվել Վստահորդի օրինական շահերի պաշտպանություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր հնարավոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև չի իրականացրել վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, մասնավորապես՝ չի բողոքարկվել հայցադիմումը վերադարձնելու մասին դատարանի որոշումը կամ կրկին անգամ ներկայացնելիս հայցադիմումում չի վերացվել Դատարանի կողմից արձանագրված թերությունները:

Օբյեկտիվորեն հնարավոր էր նաև հանգել այն հետևության, որ բոլոր դեպքերում

Փաստաբանը տվյալ գործի շրջանակներում հնարավորինս իրականացրել է վստահորդի շահերի պաշտպանություն և ստեղծված իրավիճակն պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով, ինչպես նաև կողմերի սուբյեկտիվ դրսևորումներով, եթե Խորհուրդը չարձանագրեր Փաստաբանի վարքագծում Կանոնագրքով սահմանված այլ կանոնների խախտումներ:

### **Կանոնագրքի 3.8.4 կետի 1-ին և 3-րդ ենթակետերի խախտումների մասով**

Կանոնագրքի 3.8.4 կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

....

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Դիմումատուն իր բացատրություններում հայտնել է, որ այն պահից երբ փաստացի հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, դիմել է վերջինիս որպեսզի իրեն վերադարձնի գործի նյութերը, ինչպես նաև ծառայությունների համար վճարված գումարը:

Դիմողի պնդմամբ փաստաբանը հրաժարվել է վերադարձնել փաստաթղթերը՝ պատճառաբանելով, որ դիմել է փաստաբանների պալատին որպեսզի Դիմումատուի կողմից իրեն տրված լիազորությունները դադարեցվի և երբ դադարեցվի կվերադարձնի փաստաթղթերը: Դիմողի այս բացատրության իսկությունը հաստատվել է Լիդա Հակոբյանի կողմից 14.04.2021 թ. Ձեկուցագրում, մասնավորապես՝ վերջինս հայտնել է, որ 12.03.2021թ. դիմել է ՀՀ փաստաբանների պալատ որպեսզի դադարեցվի Գայանե Մուսաելյանի կողմից իրեն տրված լիազորագրի ժամկետը և պատասխան ստանալուց հետո գրավոր կտեղեկացնի Գայանե Մուսաելյանին:

Նախ Խորհուրդն արձանագրում է առ այն, որ առկա չէ որևէ իրավական կարգավորում համաձայն որի ՀՀ փաստաբանական պալատը որևէ ընթացակարգով օժտված է լիազորագրի ժամկետը դադարեցնելու լիազորությամբ: Նաև ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ 12.03.2021 թվականին Լիդա Հակոբյանին հայտնի է եղել որ Դիմումատուն այլևս չի ցանկանում որպեսզի վերջինս իրականացնի իր շահերի պաշտպանությունը:

Հետևաբար, Խորհուրդն արձանագրում է, որ դեռևս 12.03.2021 թվականի դրությամբ Լիդա Գագիկի Հակոբյանը պարտավոր էր նախ դադարեցնել լիազորագրի գործողությունը, վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, ինչպես նաև Դիմումատուին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը: Մինչդեռ, անհիմն հիմնավորմամբ վերջինս փաստացի չի

կատարել իր վրա դրված պարտավորությունը:

Այսպիսով, Փաստաբանի բանավոր բացատրություններում հնչեցրած այն պնդումը, որ Դիմումատուն գրավոր իրեն անձամբ չի դիմել, որպեսզի ինքը վերադարձնի փաստաթղթերը և հոնորարի այն մասը, որի դիմաց իր կողմից չի մատուցել իրավաբանական ծառայություններ, Խորհուրդն արձանագրում է, որ դեռևս 12.03.2021 թվականի դրությամբ փաստացի Դիմումատուն հրաժարվել է փաստաբանական ծառայություններից, մինչդեռ Փաստաբանը 12.03.2021թ. մինչև 14.04.2021թ. ընկած ժամանակում չի կատարել Դիմումատուի պահանջը, որի ուժով Դիմումատուն ստիպված է եղել դիմել Ոստիկանություն, ՀՀ փաստաբանների պալատ և մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Ստեղծված իրավիճակում Խորհուրդն արձանագրում է, որ Դիմումատուն հայցելով փաստաբանի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն այլ անձանց ոտնձգություններից, փաստացի բախվել է մի իրավիճակի հետ, երբ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել հայցել իր իրավունքների պաշտպանությունն արդեն իսկ փաստաբանի վարքագծից:

Նման իրավիճակն անընդունելի է Խորհրդի կողմից: Փաստաբանի նման վարքագիծը ուղղակիորեն ստվերում է փաստաբանական ինստիտուտի հեղինակությունը և նսեմացնում է փաստաբանի կերպարը: Փաստաբանի նման վարքագծի արդյունքում ձևավորվում է անվստահություն փաստաբանական իրավապաշտպան գործունեության նկատմամբ:

Ի վերջո, յուրաքանչյուր փաստաբանը հանդիսանալով փաստաբանական համայնքի (հանրույթի) պատասխանատու անդամ, պետք է խուսափի փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը խաթարող վարքագծից:

#### **Կարգապահական տույժի ընտրությունը**

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

**Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի



աստիճանը, ինչպես նաև փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «տուգանք» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով,  
Խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանին (արտոնագիր 1038) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.4 (1), 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտման համար:**

**2. Փաստաբան Լիդա Գագիկի Հակոբյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և որպես լրացուցիչ տույժ նշանակել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցում «դեոնթոլոգիա» դասընթացից 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:**

**3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան

**16 նոյեմբերի 2021թ.  
թիվ ԿԳ/176-Ա  
ք. Երևան**